ՀՀ արտաքին տնտեսական կապերը ԵՄ հետ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Շ. Թորոսյան, տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան
ԵՊՀ Բանբեր, Երևան 2007թ., 3(123), էջ 196-202

Անկախությունից ի վեր եվրոպական կառույցներին ինտեգրվելը Հայաստանի համար եղել է և շարունակում է մնալ որպես արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սա ակնառու կերպով արտացոլվում է Եվրամիության, Եվրոպայի Խորհրդի, Հյուսիսատլանտյան դաշինքի (North Atlantic Treaty Organization, NATO) և այլ եվրոպական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի երկկողմանի հարարաբերություններում:

ԵՄ հետ Հայաստանի համագործակցությունը սկիզբ առավ հենց անկախությունից հետո ԱՊՀ երկրներին տրվող տեխնիկական օգնության (Technical Assistance to the Commonwealth of Independent States, TACIS) ծրագրի և ԵՄ երկրների հետ Հայաստանի երկկողմանի հարաբերությունների զարգացման շրջանակներում: Հարկ է նշել, որ ԵՄ երկրների շրջանակներում Հայաստանը բավական սերտ կապեր ունի ներկայիս ԵՄ հիմնադիր երկրներից մեկի՝ Ֆրանսիայի հետ, որտեղ բնակվում է ամենամեծ թվով սփյուռքահայությունն ամբողջ Եվրոպայում:

Ներկայիս ԵՄ ձևավորման համար հիմք է հանդիսացել Եվրոպական տնտեսական համայնքը (European Economic Community, EEC), որը ստեղծվել է 1957թ. մարտի 25-ին՝ համաձայն Հռոմի համաձայնագրի: Համաձայնագիրը ուժի մեջ մտավ 1958թ. հունվարի 1-ին: Հիմնադիր վեց երկրներն էին Բելգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան և Իտալիան: Հետագայում Եվրոպական տնտեսական համայանքը ընդլայնվեց՝ իր մեջ ներառելով նոր անդամներ: Այսպես, Անգլիան, Դանիան և Իռլանդիան անդամակցեցին 1977թ. հուլիսի 1-ին, Հունաստանը՝ 1981թ., Իսպանիան և Պորտուգալիան՝ 1986թ. հունվարի 1-ին: Քանի որ Եվրոպական տնտեսական համայնքն իր զարգացմամբ սկսեց ավելի շատ պատասխանատվություն կրել տնտեսական և սոցիալական հարցերում, ուստի այն սկսեց դիտարկվել ավելի

լայն առումով և առաջ եկավ Եվրոպական համայնք (European Community) անվանումը: Հետագայում՝ 1993թ. նոյեմբերի 1-ին, Մաաստրիխտի պայմանագրով «Community»-ն փոխարինվեց «Union»-ով, և ձևավորվեց ԵՄ ներկայիս անվանումը: Իրականում Եվրոպական համայնք անվանումը մինչև օրս գործում է, երբ հարցը վերաբերում է բացառապես տնտեսական խնդիրներին: Սակայն, ԵՄ զարգացումը և ընդլայնումը այդքանով չավարտվեց: Այսպես, 1995թ. ԵՄ անդամակցեցին Ֆինլանդիան, Շվեդիան և Ավստրիան: Այնուհետև, 2004թ. մայիսի մեկին անդամակցեցին Արևելյան Եվրոպայի տաս երկրները[1], իսկ 2007թ. հունվարի 1-ին՝ Ռումինիան և Բուլղարիան:

ԵՄ հետ Հայաստանի Հանրապետության իրավական համագործակցության հիմքը դրվել է 1996թ. ապրիլի 22-ին՝ ԵՄ և ՀՀ միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (Partnership and Cooperation Agreement , PCA) ստորագրումով, որը ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին[2]: Թե ինչու 1996թ. ստորագրված համաձայանագիրը ուժի մեջ մտավ միայն 1999թ., բացատրվում է այն հանգամանքով, որ 1997թ. Հայաստանի և ԵՄ միջև կնքվեց մեկ միջանկյալ պայմանագիր, որը պետք է կարգավորեր Գործընկերության և համագործակցության համաձայնագրում արտացոլված առևտրին և հարկերին վերաբերող հիմնախնդիրները: Իրականում համաձայանգիրը ներառում է ՀՀ և ԵՄ միջև համագործակցության բոլոր ոլորտները, բացի ռազմականից: Ընդհանուր առմամբ համաձայնագրի հիմնական նպատակն է Հայաստանում հաստատել և զարգացնել շուկայական համակարգ:

2004թ. մայիսին ԵՄ ընդլայնման արդյունքում փոփոխվեցին ԵՄ արտաքին սահմանները: Որպես հետևանք փոփոխվեց նաև ԵՄ քաղաքականության աշխարհագրությունը՝ ընձեռելով նոր հնարավորություններ խորացնելու առկա հարաբերությունները ԵՄ և իր նոր՝ արևելյան և հարավային հարևան երկրների միջև: Արդյունքում Հայաստան-ԵՄ ինտեգրման գործընթացները էլ ավելի զարգացան, երբ 2004թ. հունիսին Եվրոպական հանձնաժողովի առաջարկով Հայաստանն ընդգրկվեց Եվրոպական հարևանության քաղաքականության

---

[1] Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Կիպրոս, Մալթա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա:

[2] Ներկայումս ԵՄ հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիր ունեն հետևյալ երկրները՝ Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուզբեկստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան:

(European Neighborhood Policy, ENP) մեջ: ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականությունն ընդգրկում է նոր մոտեցումներ, որոնք առաջանցիկ են ԵՄ և հարևան երկրների միջև առկա հարաբերություններից և համագործակցությունից: Քաղաքականության հիմնական նպատակն է ԵՄ ընդլայնման օգուտները կիսել բոլոր ցանկացող հարևան երկրների հետ՝ երկուստեք բարձրացնելով կայունությունը, անվտանգությունը, բարեկեցությունը, ինչպես նաև խուսափել ընդարձակված ԵՄ և հարևան երկրների միջև նոր՝ տարանջատող սահմանային վերձևումների առաջացումից: Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման համար ԵՄ պետք է տրամադրի նշանակալից ֆինանսական և տեխնիկական օգնություն: Այդ նպատակով Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների համար ստեղծվեց Եվրոպական հարևանության և գործընկերության ծրագիր (European Neighborhood and Partnership Instrumet, ENPI): Այն մեծ հնարավորություններ կստեղծի ԵՄ և Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների միջև համագործակցության համար՝ ներառելով օժանդակության նոր ձևեր և մասնակից երկրներին հնարավորություն տալով առավելագույնս համապատասխանեցնելու եվրոպական նորմերը և ստանդարտներն իրենց երկրի զանազան ոլորտներում:

Հայաստան-ԵՄ համագործակցությունը զարգանում է նաև բարձր տեխնոլոգիաների, կրթության և սոցիալական ոլորտներում, հատկապես պետք է նշել պարենային անվտանգության ծրագիրը (Food Security Program, FSP)[3]: Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում շատ նշանակալից է ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օգնությունը: Այսպես, 1991-2005թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ տարբեր ծրագրերի շրջանակներում (մասնավորապես ECHO, TACIS և FSP) Հայաստանին տրամադրվել է ավելի քան 380 մլն. եվրո և երկարաժամկետ վարկեր՝ ավելի քան 86 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ[4]:

1991թ. ի վեր Հայաստանում իրականացվել են շուկայական բարեփոխումներ, որոնք հիմնականում վերաբերել են առևտրի ազատականացման և տնտեսության կայունության ու վերակառուցման

[3] Տե՛ս **Sergey Minasyan**, EU-Armenia cooperation and the new European neighborhood policy, 2006:
[4] Տե՛ս “European Neighboring Policy”, Country Report, Armenia, COM(2005) 72 final:

հիմնախնդիրներին: Դրա շնորհիվ, 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ:

Լինելով շրջափակված և բնական ռեսուրսներով ոչ հարուստ երկիր՝ Հայաստանին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի շատ աննշան մասը: Ավելին, Հայաստանի արտաքին առևտուրը ինչպես տարածաշրջային, այնպես էլ ապրանքային կառուցվածքով շատ խիստ կենտրոնացված է: Մասնավորապես, Հայաստանի ամենագլխավոր հինգ առևտրային գործընկերներին բաժին է ընկնում ամբողջ արտաքին առևտրի մոտ 80%:

Գծապատկեր 1: ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալների դինամիկան 1993-2006թթ[5]. (մլն. դոլար)[6]



ԵՄ և Հայաստանի միջև արտաքին առևտրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալներին, սակայն, ի տարբերություն ԱՊՀ երկրների, ԵՄ հետ արտաքին առևտուրը ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպես, 1993-1998թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրում և՝ արտահանման, և՝ ներմուծման ծավալները զգալիորեն գերազանցել են ԵՄ երկրներ արտահանման և ԵՄ երկրներից ներմուծման ծավալներին (Տե՛ս գծապատկեր 1 և գծապատկեր 2):

[5] ԵՄ հետ ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2004-2006թթ. բերված են ԵՄ 25 երկրների համար:
[6] Աշխատանքում բերված և հաշվարկված տվյալների աղբյուր է հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

1998թ. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանաբար 259.4 և 221.4 մլն. դոլար: Այնուհետև, մինչև 2001թ. զգալիորեն կրճատվել են ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները, և հակառակ դրան՝ աճել ԵՄ երկրներից ներմուծման ծավալները: Սկսած 2002թ.՝ մեծ տեմպերով միաժամանակ աճել են և՛ ԱՊՀ, և՛ ԵՄ երկրներից ներմուծման ծավալները՝ 2006թ. կազմելով համապատասխանաբար 571.5 և 691.1 մլն. դոլար: Նման միտում առկա է նաև ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման ծավալներում (Տե՛ս գծապատկեր 2): Այսպիսով, 1993-2002թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրը կրել է «պարուրաձև բնույթ»: Այսինքն, երբ նվազել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, աճել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, իսկ երբ նվազել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, աճել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները:

Գծապատկեր 2: ԵՄ և ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների դինամիկան 1993-2006թթ. (մլն. դոլար)



Այսպիսով, 1993-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ երկրների հետ անընդհատ աճել է, ընդ որում միաժամանակ աճել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները: Սակայն պատկերը փոխվում է 2001թ., երբ 17.1%-ով կրճատվում է ԵՄ արտահանման ծավալը՝ կազմելով 88.6 մլն. դոլար: Այնուհետև 2002-2003թթ. ընկած ժամանակաշրջանում գրեթե երկու անգամ աճում են Հայաստանից ԵՄ արտահանման ծավալները: Նմանապես 2001թ. 16.5%-ով կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծման ծավալը՝ կազմելով 252.2

մլն. դոլար: 2003-2006թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանից ԵՄ արտահանման ծավալը աճել է 83.0%-ով, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծման ծավալը՝ 85.5%-ով: ԵՄ հետ արտաքին առևտրաշրջանառության նման աշխուժացումը կարելի է բացատրել այն փաստով, որ 2003թ. սկզբին Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը ԵՄ երկրների շուկաները էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական ապրանքների համար: Միևնույն ժամանակ ԱՀԿ անդամակցությունը նաև էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական շուկան եվրոպական ապրանքների համար: Մյուս կողմից, հարկ է նշել, որ ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը նաև կրել է ավտոնոմ բնույթ: Այսինքն, ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալների ավելացում գրանցվել է նաև մինչև Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը, իսկ ԱՀԿ անդամակցությունը լրացուցիչ խթան հանդիսացավ այդ գործընթացի համար:

Այսպիսով, եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենագլխավոր գործընկերը ԵՄ-ն է:

Աղյուսակ 1: ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ 2006թ. (մլն. դոլար)

	Բելգիա	Գերմանիա	Նիդերլանդներ	Իտալիա	Հունաստան
Արտահանում	108.8	148.0	126.9	28,9	0.6
Ներմուծում	157.1	85.0	22.2	76.4	80.6
Բաժինը ԵՄ ընդհ. ապրանք. մեջ (%)	22,8%	20,0%	12,8%	9,0%	6.9

ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը, ինչպես ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի դեպքում, շատ կենտրոնացված է (Տե՛ս աղյուսակ 1 և աղյուսակ 2): ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի կենտրոնացվածությունը մեկնաբանվում է այն փաստով, որ ԵՄ 25 երկրներից Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրներն են՝ Բելգիան, որին բաժին է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 22,8%, Գերմանիան (20,0%), Նիդերլանդները (12.8%), Իտալիան (9.0%), Հունաստանը (6.9%) և Ֆրանսիան (3,5%): Ընդհանուր առմամբ նշված երկրներին բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի 75,0%:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ չնայած Ֆրանսիայի հետ Հայաստանի բավական սերտ կապերին՝ նրան բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի 3.5%: Ամեն դեպքում ՀՀ կապերը Ֆրանսիայի հետ չեն սահմանափակվում միայն արտաքին առևտրով: Այսպես, 1992-2006թթ. ընթացքում Ֆրանսիայից Հայաստան կատարվել են ավելի քան 120 մլն. դոլարի ուղղակի ներդրումներ: 2006թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գործում էին 111 ձեռնարկություններ և ընկերություններ ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ:

Աղյուսակ 2: ԵՄ հիմնական գործընկեր երկների հետ առևտրում գլխավոր ապրանքախմբերը 2006թ. (մլն. դոլար)

	Բելգիա		Գերմանիա		Նիդերլանդներ		Իտալիա		Հունաստան	
	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.
Սև մետաղներ և իրեր	-	-	64.9	-	109.7	-	-	8.1	-	7.1
Պղինձ	-	-	71.3	-	3,3	-	-		-	-
Սարքավորումներ	-	-	-	17.7	-	1.6	-	24.2	-	6.0
Տրանսպորտային միջոցներ	-	-	-	69.1	-	-	-	1,0	-	-
Թանկարժեք քարեր և մետաղներ	108.1	108.9	-	-	-	-	-	6.3	-	-
Տեքստիլ հագուստ	-	-	-	-	-	-	20,2	10.1	-	-
Տրիկոտաժե հագուստ	-	-	-	-	-	-	3.8	2,5	-	-
Կահույք	-	-	-	-	-	-	-	2.7	-	4.2
էլեկտրական սարքավորումներ	-	-	-	18.2	-	-	-	8.3	-	19.1
Դեղագործական մթերք	-	-	-	4.8	-	1,5	-	2.0	-	-
Բժշկական ապարատներ	-	-	-	5.5	-	1.5	-	1.1	-	-
Ծխախոտ	-	-	-	2.2	-	-	-	-	-	6.1
Ապակի և ապակե իրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-

Ուսումնասիրելով վերը նշված հիմնական գործընկեր երկրների հետ կատարվող արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, որոշ ապրանքախմբերի գծով նկատվում է զգալի կենտրոնացում (Տե՛ս աղյուսակ 2): ՀՀ և ԵՄ հիմնական գործընկեր երկրների միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում են մետաղները, մասնավորապես՝ սև մետաղներ, պղինձ և այլ ոչ թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարերը, մեքենաներ և

սարքավորումները, քիմիական ապրանքները, տրանսպորտային միջոցները, դեղագործական մթերքը, բժշկական ապարատները և տեքստիլ իրերը:

Այսպես, Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակակար կշիռ են կազմում մետաղները, ընդ որում 2005թ. մետաղների բաժինը դեպի ԵՄ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 55%, իսկ 2006թ.՝ 61.9%[7]: Մետաղները արտահանվում են հիմնականում Գերմանիա և Նիդերլանդներ: Հայաստանից ԵՄ արտահանվում են նաև թանկարժեք քարեր (25.6%), որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնավորապես՝ Բելգիա), տեքստիլ իրեր (3.9%) և այլն:

2006թ. տվյալներով ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել մեքենաները և սարքավորումները, ինչպես նաև փոխադրամիջոցները, որոնց բաժին է ընկել ԵՄ-ից ընդհանուր ներմուծման 30.7%: Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է նաև թանկարժեք քարեր (27.6%), քիմիական ապրանքներ (7.4%), սննդամթերք (6.7), տեքստիլ իրեր (5.8%) և այլն:

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ապրանքային կառացվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի և Նիդերլանդների հետ արտաքին առևտրում: Առաջինի դեպքում՝ բացառապես թանկարժեք քարերի գծով, իսկ Նիդերլանդների հետ՝ բացառապես մետաղների գծով: Գերմանիայի, Իտալիայի, Հունաստանի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով):

Այսպիսով, չնայած ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները գնալով զարգանում են, սակայն ՀՀ և ԵՄ միջև իրականացվող արտաքին առևտուրը ցանկալի արդյունավետություն չունի: Մասնավորապես, ԵՄ հետ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Իտալիայի հետ արտաքին առևտրի): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայակական սպառողական ապրանքները ենթարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Սակայն, ամեն դեպքում, մեր

[7] Տե՛ս “Eurostat”, Statistical regime 4, Armenia:

կարծիքով, այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ձեռնարկությունների ստեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: ԵՄ երկրների ներդրողների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը թույլ կտան Հայաստանին հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և թողարկել մրցունակ արտադրանք, որը կարող է սպառվել ոչ միայն ԵՄ երկրների, այլև համաշխարհային շուկայում:

Т.Ш. Торосян, Г.Р. Айрапетян – ***Внешнеэкономические отношения Армении с Европейским Союзом.*** – Статья посвящена изучению вопросов развития внешнеэкономических отношений Армении с Европейским Союзом, особое внимание уделено развитию торговых отношений. Проведенный анализ показал, что с 1998 г. по сегодняшний день Европейский Союз является крупнейшим торговым партнером Армении. Было выявлено, что географическая и товарная структуры торговых отношений Армении с ЕС носят централизованный характер: 1) на шесть европейских стран (Бельгию, Германию, Нидерланды, Италию, Грецию и Францию) приходится 75,0% торгового оборота Армении с ЕС; 2) торговля с Бельгией представлена исключительно оборотом драгоценных камней, а с Германией и Нидерландами в основном – черных и цветных металлов.

Օգտագործված գրականություն

1. “The European Union in Detail Handbook”, European Integration Library, Volume VIII, AEPLAC, Yerevan 2006.
2. “EU-Armenia cooperation and the new European neighborhood policy” Sergey Minasyan, 2006
3. “European Neighboring Policy”, Country Report, Armenia, COM(2005) 72 final
4. “Neighborhood Relations Between The EU And Armenia”, Aghasi Harutyunyan, 2006
5. Armenia (2006-2009), Asian Development Bank, 2006
6. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն